ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար անշարժ գույքի վարձակալության ձեռքբերման նպատակով 2019 թվականի մարտի 29-ին կնքված N 931 պայմանագրում 2024 թվականի ապրիլի 3-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1

Անհրաժեշտություն է առաջացել նախատեսել վարձակալության համար անհրաժեշտ վճարումները և ֆինանսական միջոցների առկայությամբ պայմանավորված կնքվել է համաձայնագիր

Փոփոխության նկարագրություն

Հաստատվել է 2024 թվականի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը:

Փոփոխության հիմնավորում

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անհրաժեշտություն է առաջացել նախատեսել վարձակալության համար անհրաժեշտ վճարումները և նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցների՝ կնքվել է համաձայնագիր:

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե

Նոտարական ակտի կոդ: 785-20240401-88-7825098
Նոտարական ակտի գաղտնագիր: CJTPTD

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 6

29.03.2019 թվականին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու և 2024 թվականի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին

Երկու հազար քսանչորս թվականի ապրիլի երեքին քաղաք Գորիս
«Արդշինբանկ» ՓԲԸ (հասցեն՝Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Գրիգոր Լուսավորչի փողոց, թիվ 13 (տասներեք) վարչական շենք», գրանցման վկայական. թիվ 0394, գրանցման համարը՝ 83, գրանցման ամսաթիվը՝ 25.02.2003թ. (քսանհինգը փետրվարի երկու հազար երեք թվական), այսուհետ՝ **«Վարձատու»**, ի դեմս Վարչության նախագահ Արտակ Անանյանի, ում անունից հանդես է գալիս «Գորիս» մասնաճյուղի կառավարիչ **ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԸ**, ծնված՝ 19/05/1982թ-ին, ՀԾՀ՝ 2905820365, նույնականացման քարտ՝ 006359673, տրված՝ 032-ի կողմից, 17/08/2017թ-ին, հաշվառված՝ ՍՅՈՒՆԻՔ, ԳՈՐԻՍ, ԳՈՐԻՍ, Գ. ՆԺԴԵՀԻ Փ., 43, Տ, ով գործում է համաձայն 20.03.2024թ. տրված № 1670-2958 լիազորագրի, մի կողմից, և **Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն** (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մ. Խորենացու Փ. 3,7, գրանցման համար՝ 286.184.1025088, ՀՎՀՀ 02647057), այսուհետ՝ **«Վարձակալ»,** ի դեմս գլխավոր քարտուղար՝ Էդգար Գևորգյանի, որի անունից լիազորագրով հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի գնումների կազմակերպման և վարչատնտեսական ապահովման վարչության վարչատնտեսական բաժնի տնտեսվար **ՔՈՉԱՐ ՀՐԱՆՏԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԸ**, ծնված՝ 16/11/1984թ-ին, ՀԾՀ՝ 2611840598, անձնագիր՝ AT0499650, տրված՝ 032-ի կողմից, 15/06/2020թ-ին, հաշվառված՝ ՍՅՈՒՆԻՔ, ԳՈՐԻՍ, ԳՈՐԻՍ, ՄԱՇՏՈՑԻ Փ., 1, Շ, 51ԲՆ, մյուս կողմից, միասին անվանվելով Կողմեր, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 29.03.2019թ. կնքված և սեղանամատյանում թիվ 931 համարով գրանցված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.
1.Սույն համաձայնագրով Կողմերը փոխադարձ համաձայնության են գալիս՝
1.1. Պայմանագրի 1.2. կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ
«1.2 Պայմանագիրը կնքվում է - մինչև 31.12.2026թ. (երեսունմեկը դեկտեմբերի երկու հազար քսանվեց թվականը) ներառյալ:
1.2 Հաստատել 2024 թվականի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի, որը հանդիսանում է սույն համաձայնագրի և Պայմանագրի անբաժանելի մասը:
2.Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
3.Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքելու պահից, իսկ համաձայնագրի պայմանները կիրառվում են Կողմերի միջև 2024թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:
4.Համաձայնագիրը ենթակա է վավերացման նոտարական կարգով, իսկ սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման պետական լիազոր մարմնում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Սույն համաձայնագիրը Կողմերի համար բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից, և Կողմերին պարզաբանվեցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ գործող նորմերը:
5.Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով, 4 (չորս) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, որոնցից մեկական օրինակ կողմերից յուրաքանչյուրին, մեկը վավերացնող նոտարական գրասենյակին, մեկը՝ իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմնին: Համաձայնագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:

6.Կողմերի ստորագրությունները.

«ՎԱՐՁԱՏՈՒ»

«Արդշինբանկ» ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Գր. Լուսավորչի փող.13

ՀՎՀՀ 02566492

Հ/Հ 2470036863310000

Լիազորված անձ՝

Տ. Բարխուդարյան

(ստորագրություն)

«ՎԱՐՁԱԿԱԼ»

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7

ՀՎՀՀ 02647057

Հ/Հ 900011054013

Կենտրոնական գանձապետարան

Գործառնական վարչություն

Լիազորված անձ՝

---------- Ք. Ղազարյան

(ստորագրություն)

Երկու հազար քսանչորս թվականի ապրիլի երեքին, սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ <<Սյունիքի մարզ>> նոտարական տարածքի նոտար ՇՈՂԵՐ ՆՈՐԱՅՐԻ ԲԱՂՈՒՄՅԱՆԻՍ կողմից:

Կողմերը Համաձայնագիրը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը , ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են :

Գրանցված է գրանցամատյանում---1814---

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Շողեր Նորայրի Բաղումյան

Հավելված 1
29.03.2019թ., կնքված և սեղանամատյանում թիվ 931 համարով
գրանցված ոչ բնակելի տարածքի վարձակալության
պայմանագրում փոփոխություն կատարելու և 2024 թվականի
ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը
հաստատելու մասին թիվ 6 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2024թ. պետական բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում									
		ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը՝ տարի
1.	ք. Գորիս, Տաթևացու 9 հասցեում գտնվող վարչական շենքի երկրորդ հարկից 472.3քմ. ոչ բնակելի տարածքի վարձակալություն	1,168,941	1,558,588	1,948,235	2,337,882	2,727,529	3,117,176	3,506,823	3,896,470	4,675,764	**4,675,764**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

«ՎԱՐՁԱՏՈՒ»
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Գր. Լուսավորչի փող.13
ՀՎՀՀ 02566492
Հ/Հ 2470036863310000
Լիազորված անձ՝

Տ. Բարխուդարյան
(ստորագրություն)

«ՎԱՐՁԱԿԱԼ»
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
Կենտրոնական գանձապետարան
Գործառնական վարչություն

Լիազորված անձ՝ Ք. Ղազարյան

(ստորագրություն)